№ 205 ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16 — 1901 — ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16 № 205

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ զրոյց. Մատենագրութիւն. Մեր աչակերտները. Երկաթուղու անհրաժեշտութիւնը Շուշու գաւառում. Նամակ Պետերբուրգից. Նամակ Խրմագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ցուցահանդէսը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՑ ԶՐՈՅՑ

Եթէ յիշում էք, ընթերցող, անցեալները «Մշակի» մէջ արտատպված էր Կ. Պոլսի լրագիրներից մի տարօրինակ հիւանդութեան դէպք։ Քէօթահիա քաղաքում կանայք կանչում են աքաղաղի պէս, մլաւում են կատուի պէս եւ այլ անասունների ձայներ են հանում։

Այդ հիւանդութիւնը նկարագրում էր մի ականատես։ «Հաղիւ թէ փողոցի մէջ առաջացած էի,—ասում է նա—երբ մի սիրուն կին տեսայ, որ ինձ մօտենալով՝ մի մելամաղձիկ «մեաու» արաւ, ցոյց տալով իր մարգարտաշար ատամները։ Մի քիչ հեռու 16 տարեկան մի գեղեցիկ աղջիկ սկսեց կանչել աքաղաղի նման։ Մի ուրիշ կին այն ատաֆան վարպետ կերպով կովի ձայն հանեց, որ ինձ զոմում կարծեցի։ Քիչ յետոյ բաղմաթիւ կանայք շրջապատեցին ինձ, որոնք իրանց հանած անճոռնի ձայներով մի մեծ ժիսոր պատճառեցին։ Ամեն հասակի կանայք կային այդտեղ, պառաւից սկսած մինչեւ 15 տարեկան աղջիկը»։

Հէքիաթի կամ պառաւական առասպելի պէս մի բան է սա, չէ։ Մարդիկ-անասունների փոխված։ Մի ամբողջ հօտ աքաղաղների, կովերի, ոչխարների։ Հաւատալու բան է սա։

Այո, հաւատալ պէտք է։ Կ. Պոլսի բժիշկներից մէկը շտապեց յայտնել, որ դա գիտութեան վաղուց յայտնի մի հիւանդութիւն է։ Եւ բացատրեց թէ ինչպէս է մարդը հանում այն ատաֆանին, երբ այլ եւս իրան մարդ չէ համարում, այլ կամ աքաղաղ կամ չորքոտանի ու դրա համեմատ էլ ձայներ է արձակում։

Այդ բացատրութիւնն է ահա ինձ հարկաւոր։

Մարդը ունի անձնականութիւն. դա որոշ, անհատական, անջատ եւ բարոյապէս պատասխանատու լինելու զգացումն է։ Քանի որ կայ այդ զգացումը, մարդը մարդ է, տոկուն, գործող, գիտակից մի արարած։ Բայց հէնց որ կորչում է այդ զգացմունքը, երեւան են գալիս հոգեկան այնպիսի խանգարումներ, որոնցից մէկի նշանն այն է, որ երեւացել է Քէօթահիայի կանանց մէջ։

Ես գիտական մանրամասնութիւնների մէջ չեմ մտնում. գիտութեան բացատրութիւնը վերջ ի վերջոյ այն է հասկացնել տալիս, որ մարդը ունի մի նեցուկ, մի մեխ, որի պահվելով՝ մարդ է մնում, եւ հէնց որ կորցնում է այդ նեցուկը, այդ մեխը, մլաւոցներ, մկկոցներ, բառանչոցներ է արձակում։

Ինչպէս են Քէօթահիայի կանայք կորցրել մարդկայնութեան այդ մեխը—ես, ի հարկէ, չը գիտեմ։ Բայց կայ եւ այն հանգամանքը, որ դա վարակող հիւանդութիւն է, դա հօտային մի զգացմունք էլ կարող է դառնալ։

Ինչ նկատվում է մի անհատի մէջ, նոյնը շատ անգամ կարելի է տեսնել եւ հասարակութիւնների մէջ։ Հասարակութեան հոգեբանութիւնը, առողջական դրութիւնը շատ եւ շատ դէպքերում է յիշեցնում անհատի դրութիւնը։ Զը կան միթէ թոքախտաւոր, հիւծվող հասարակութիւններ. չը կան հիւթերի, առողջարար կերակուրների պակասութիւնից դանդաղ կերպով մեռնող հասարակութիւններ։

Կան, այո։ Պատմական երկար անցեալը, ներկան մեզ ցոյց են տալիս շատ այդպիսի օրինակներ։ Եւ ներկայ դէպքում Քէօթահիայի համաճարակը նոյնպէս հասարակական երեւոյթի մի նշան ունի։

Ինչու՞ տարօրինակ, անհաւատալի պէտք է թւայ, որ մի դժբաղդ քաղաքում կանայք կորցրել են անձնականութեան զգացումը։ Վերցնենք մեր հասարակական կեանքը, վերցնենք մեր մտաւոր աշխարհը։ Նոյն հիւանդութիւնը չէ՞, որ վարակել է մեր հասարակութիւնը։

Մենք ունէինք որոշ, հաստատուն յենակէտեր. մենք զգում էինք, թէ ինչ ենք մենք իրրեւ մարդկային հասարակութիւն, ինչ պարտականութիւն եւ ինչ պատասխանատուութիւն կայ մեզ վրա։ Գոյութիւն ունէր մեխը, որ պահում էր մեզ ընկնելուց, մարդկային լեզուն եւ մտքերը կորցնելու աղէտից։

Այժմ կա՞յ այդ յենակէտը։ Նայեցէք ձեր չորս կողմը, տեսէք որքա՞ն կատուներ են մլաւում, որքա՞ն ոչխարներ են մկկում, որքա՞ն կովեր են բառանչում, եւ ձեզ համար պարզ կը լինի, որ նոյն տեսակ հիւանդութեամբ վարակված է եւ մեր հասարակական օրգանիզմը։

Դուք պատահում էք մի մարդու։ Ըստ երեւոյթին, նա շատ առողջ է, գեղեցիկ. կրթված է, վերջացրել է համալսարանը, ճանապարհորդել է, սեւը սպիտակից ջոկելու բոլոր յարմարութիւններն ունի։ Բայց խօսեցրէք. եւ նա այնպիսի մլաւոց կը հանէ, որ ձեր ականջները կը խլանան։ Զը կայ պահող-պահպանող մեխը, կորել է որոշ, հաստատուն, պարզ գաղափարը. մարդու մէջ չէ մնացել բարոյական, մտաւոր անկախութիւն։ Եւ տատանվում է մեր հիւանդը. նա ընկել է, արդէն այն ատաֆանի վրա է, որ այլ եւս չէ զգում թէ մարդ է. ոչխարութիւնը, կովութիւնը վաղուց տարել է նրան եւ նա միայն իր այդ իդէալների ձայներն է հանում։

Տեսէք երկրորդին, երրորդին, չորրորդին։ Մէկը աքաղաղ է, միւսը աղուէս, մի ուրիշը կատու, ճագար, որը հաչում է, որը զռում է։ Եւ ստացվում է Քէօթահիայի անտանելի ժիսորը։

Փորձեցէք մարդկային լեզուով դիմել այդ նեցուկ կորցրած, պատասխանատուութեան մասին այլ եւս ոչինչ հասկացողութիւն չունեցող հօտին։ Տուէք մի շարք հարցեր։

Հարկաւոր է լոյսը։ Հարկաւոր է ընտրողական սկզբունքը։ Վատ չէ, երբ մեր լուսաւոր դարում կազմվում է տգէտ հոգեւորականութեան կաստա, որ պիտի տիրէ մեզ վրա, պիտի ոտի տակ տայ մեր իրաւունքները, մեր առաջադիմութիւնը, մեր ապագան։ Հարկաւոր է կարգ ու կանոն մեր գործերի մէջ։ Ի՞նչ էք ուզում—որոշ, դրական օրէ՞նք, թէ փաշայականութիւն։ Լաւ է, որ կարգադրութիւնները փոփոխվում են ամեն օր, ամեն ժամ, սպանելով ամեն ինչ, հեգնութեան առարկայ դարձնելով ամեն մի օրինական հասկացողութիւն։ Պէտք է որ դուք իմանաք ձեր մայրենի լեզուն։ Պէտք է որ հայերէն գիրք հրատարակվի։ Ժողովրդի գիտակցական առաջադիմութեան համար ի՞նչ էք պարտաւոր անել։ Մի՞թէ այնքան հրաշալի է ցեխի մէջ տրորել ամեն սուրբ հասկացողութիւն, հոգի ծախել 10 հազարանոց ռոճիկի համար եւ կեղեքել բանուոր մարդուն։

Ձեզ պատասխանում են։ Բայց ի՞նչպէս։ Մի աղմուկ է դա, որի մէջ լսում էք կատուի մլաւոց, ոչխարի մկկոց, շան հաչոց, աքաղաղի եւ կովի ձայներ։ Ամեն ինչ կայ՝ անասնական ժիսորը լրացնելու համար։ Բայց չը կայ մարդկային գիտակցութիւնից բղխող պատասխան։

Երերվում, տատանվում է միտքը. նա չունի յենակէտ, չունի առաջնորդող սկզբունքներ։ Ամեն ինչ վայրիվեր է դարձել եւ մենք թափառում ենք, ինքներս էլ չիմանալով թէ ուր ենք գնում եւ ինչ ենք որոնում։ Սա հիւանդութիւն է, մտաւոր էպիդեմիա։ Եւ սակայն մենք երեւում ենք ուրիշներին իբրեւ մի առողջ հասարակութիւն։ Ի՞նչն է մեզ պակասում. հարստութիւն, գլուխ թէ կրթութիւն։ Ամեն ինչից ունենք։

Բայց գիտեն մեզ նայողները, որ մեզանից իւրաքանչիւրը կորցրել է բարոյական եւ գաղափարական յենակէտը. գիտեն որ մլաւոցներ, հաչոցներ, մկկոցներ ենք հանում ամենապարզ, տարրական գաղափարների եւ սկզբունքների դէմ։

Օ՛, եթէ իմանային մեզ նայողները, նրանք մեզ կը խղճային, ինչպէս մենք խղճում ենք Քէօթահիայի անբախտ կանանց...

Լ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Վ. Փափազեան. „Պատմուածքներ“. 120 եր. գ. 50 կ. Թիֆլիս 1901 թ.

Գրելու ձիրք, անկասկած, ունի Վ. Փափազեան, ֆանտազիայից զուրկ չէ, գիտէ երբեմն տրամադրվել ու զգացվել եւ տրամադրել ու յուզել ընթերցողներին, եւ սակայն, չը նայելով դրան, նա տալիս է թերատ, թոյլ, յաճախ չինծու գրուածքներ։

Քննադատական ճաշակ, չափի զգացմունք եւ մի կատարեալ բան ստեղծելու բուռն ցանկութիւն—ահա ինչ է պակասում նրան, ինչպէս առնասարակ մեր բէլլէտրիստների ահագին մեծամասնութեանը։

Կեղծ դրութիւններ, անբնական խօսակցութիւններ՝ պատահում են ամեն քայլափոխում, թոյլ չը տալով, որ աջող տեղերից ստացված տպաւորութիւնը հասնի ձեր մէջ իր դագաթնակէտին։

Այդպէս են Վ. Փափազեանի գրեթէ բոլոր գրուածքները, այդպէս են եւ այն պատմուածքները, որոնք մտել են այս հաւաքածուի մէջ, եթէ չը հաշուենք «Գիշերային ժամերգութիւնը» եւ «Արտը», որոնք գրեթէ զերծ են յաւառ, ծոյլ, տրտնջացող, անհնազանդ ուլաւ ազդեցութեան չենթարկվող։ Պ Դասակարգինը՝ քիչ յաւառ, մերթ կեղծ, մերթ անկեղծ, քիչ կոպիտ. իսկ III դասակարգինը՝ բարեսիրտ, հեզ, քաղաքավարի, բայց մի քիչ չար։

Գաղութի վարչութիւնը դրանցից իւրաքանչիւրի յատկութիւնների համեմատ մշակել է որոշ կանոններ ու գործնական միջոցներ եւ աշխատել է դրանցով բարեփոխել իր սաների բնոյթը, ուղղել նրանց արատաւոր կողմերը եւ առաջ մղել լաւ յատկութիւնները։

Այդ գաղութում կայ մի դպրոց տարրական-երկդասեան դպրոցի դասընթացով։ Բոլոր սաներն էլ այցելում են այդ դպրոցը իրանց հասակի եւ գիտութեան համեմատ։ Բացի դրանից նրանց սովորեցնում են նաեւ արհեստներ (կօշկակարութիւն, դերձակութիւն, կազմարարութիւն եւ ատաղձագործութիւն) եւ այգեգործութիւն։

Ինչպէս վերեւում նկատեցինք, անցեալ տարի այդ գաղութում եղել են ընդամենը 59 հոգի *), որոնցից 9-ը ուղարկված են նահանգական դատարանի վճռով, իսկ 47—հաշտարար դատաւորների վճռով։ Դրանք այդ պատժին արժանացել են հետեւեալ յանցանքների համար.

Անվայել վարմունք	3
Գողութիւն	51
Վէրք հասցնել ուրիշին . . .	3
Մարդասպանութիւն	1
Թափառաշրջիկութիւն . . .	1
Ընդամենը . .	59

Այդ փոքրահասակ ոճրագործներն ըստ հասակի դասաւորված են եղել այսպէս.

10-ից	մինչեւ 11	տարեկան . .	6 հոգի
11-ից	» 12	» . .	4 »
12-ից	» 13	» . .	5 »
13-ից	» 14	» . .	9 »
14-ից	» 15	» . .	7 »
15-ից	» 16	» . .	9 »
16-ից	» 17	» . .	7 »
17-ից	» 18	» . .	12 »
		Ընդամենը . .	49 հոգի

Դրանց տուաւր մեծամասնութիւնը եղել է աղքատ դասակարգի (գլխաւորապէս գիւղացիների եւ արհեստաւորների) զաւակներից։ Եւ դա հասկանալի է, որովհետեւ ամենից շատ այդտեղ է բացակայում կանոնաւոր դաստիարակութիւնը, ամենից շատ այդտեղ բուն դնել կարող է ոճրագործութիւնը։

Մենք դիտմամբ երկար կանգ առանք Զէմօ-Աւշալայի ուղղիչ գաղութի վրա, որովհետեւ նա «կոյրերի դպրոցի» եւ «Թիֆլիսի աշխատութեան տան» նման մի հետաքրքրաշարժ նորութիւն է ներկայացնում ամբողջ Կովկասի համար։

Այժմ առաջ բերենք մի քանի համեմատական թւեր ու վիճակագրական տեղեկութիւններ, որպէս զի ընթերցողը կարողանայ մի ընդհանուր գաղափար կազմել Կովկասի դպրոցական գործի մասին։

Ե. Թ.

*) Տես „Отчетъ Кавказ. Общества исправ. земледѣль.—ремесл. колоній за 1900 годъ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

XI

Այժմ կանգ առնենք փոքրիկ վիտրինի առաջ եւ ուշիուշով զննենք այն իրերը, որ ցուցադրել է «Զէմօ-Աւշալայի ուղղիչ գաղութը»։ Ճոխ ու գեղատեսիլ չեն այդ իրերը. մի քանի լուսանկարչական պատկերներ, մեծ ու փոքր պահարաններ ու կօշիկներ—ահա այդ բաժնի ամբողջ բովանդակութիւնը։

Բայց այդ իրերը հետաքրքրաշարժ են բոլորովին այլ տեսակէտից։ Նրանք պատրաստված են ոչ թէ սովորական վարպետների կամ աշակերտների ձեռքով, ոչ թէ սովորական արհեստանոցներում, այլ դեռահաս ոճրագործների ձեռքով—կիսաբանտանման հիմնարկութեան մէջ, որ «Ուղղիչ գաղութ»—(Исправительная колонія) անունն է կրում։

Ներկայ հասարակական կեանքն իր բազմազան արատաւոր կողմերով, թէ ամբողջ դասակարգերի եւ թէ առանձին անհատների մէջ տիրող անընդհատ մրցումն իր աւերիչ հետեւանքներով եւ գոյութեան կռիւն իր անողոք ուժով առաջացրել են մի որոշ բարոյականութեան եւ ձգտումների տէր անհատներ, որոնք յայտնի են «ոճրագործներ» մականունով։ Ոճրագործներ լինում են թէ ասրական եւ թէ իդեական սեռից, թէ ծեր, թէ մանուկ, թէ հարուստ եւ թէ աղքատ *)։

Բայց դրանց մէջ ամենատարագիրական, ամենացաւալի վիճակ ունեցողը մատաղահաս ոճրագործներն են, որովհետեւ նրանք մի տեսակ զոհ են ժառանգականութեան կամ չրջապատող մթնոլորտի ու վատ պայմանների։ Ահա հէնց այդ պատճառով էլ իւրաքանչիւր պետութիւն բացառիկ որոշ օրէնքներ է մշակել դրանց համար, իւրաքանչիւր հասարակութիւն աւելի մեղմօրէն է վերաբերվում դէպի այդպիսիները։ Մատաղահաս ոճրագործներին պատժելու սովորական ձեւը «ուղղիչ գաղութներում» ապրելու ուղարկելն է։ Ահա մի այդպիսի գաղութ է ներկայացնում է Զէմօ-Աւշալայի ուղղիչ գաղութը։

Անցեալ 1900 թուականին այդտեղ եղել են ընդամենը 59 հոգի։ Դրանք բաժանված են եղել երեք դասակարգի հետեւեալ ձեւով.

I) Դասակարգում եղել են համեմատաբար աւելի հասակաւորներն ու բարոյապէս աւելի փչացածները։

II) Դասակարգը բաղկացած է եղել համեմատաբար քիչ փչացածներից, իսկ III դասակարգում եղել են միայն ամենալաւ վարք ու բարքի տէր երեխաները։

Այդպիսի դասաւորութեան չնորհիւ հնարաւոր է դարձել բնորոշել նաեւ իւրաքանչիւր դասակարգի բարոյական ու մտաւոր յատկանիշները։ Այսպէս I դասակարգի սաները եղել

*) Տես „Skizzen aus dem Verbrecherleben“ Band I—X.

են յիշեալ պակասութիւններից եւ կարող էին իսկապէս գեղարուեստական գրուածքներ լինել, եթէ հեղինակը հասունացրած լինէր նրանց իր երեւակայութեան մէջ։ Բայց այնպէս, ինչպէս տպված են, այդ երկու պատմուածքներն էլ վիժված գրուածքներ են։

Գեղեցիկ են «Ծովի վրա» ու «Մերկ դէրուիշը» պատմուածքների սկիզբը եւ մի քանի էջեր «Գաղթականներ» մեծ պատմուածքից, որ, ընդհանուր առմամբ, շատ թոյլ գրուածք է։

Մի բան միայն անպայման լաւ է այդ բոլոր պատմուածքներում—նրանց համակրելի տէնդէնցիան, որի շնորհիւ նրանք դառնում են ընթերցանութեան օգտակար նիւթ։

Տ. Ե.

—

Նոր ստացված հրատարակութիւններ. 1) Ա. Ահարոնեան. „Մխիթարեան միաբանութիւն“ (200-ամեայ յօբելեանի առիթով). 26 եր. գ. 5 կ. Թիֆլիս 1901 թ. 2) «Կոկոյեան կտակի պատմութիւնը». 26 եր. Նոր-Նախիջան 1901 թ. 3) Тексты и розысканія по армяно-грузинской филологіи. кн. III. „Толкованіе Цѣсни пѣсней. Грузинскій текстъ по рукописи X вѣка, переводъ съ армянскаго. Изслѣд., перев. и изд. Н. Марръ. С. Петербургъ 1901 г. 4) Обзоръ бакинской нефтяной промышленности за 1900 г., очерки нефтяной промышленности С. Америки и статистическія свѣдѣнія о нефтяной промышленности въ Грозномъ, съ приложеніемъ 13-и діаграммъ и 2-хъ картъ, 645 стр. ц. 5 р. Баку 1901 г. 5) Бакинская нефтяная промышленность. Историко-статистическій очеркъ, сост. Г. Е. Старцевъ. 88 стр. ц. 50 к. Баку 1901 г. 6) Раффи. „Хентъ“, пер. съ арм. Н. М. Кара-Мурза, 328 стр. ц. 1 р. 50 к. Тифлисъ, 1901 г. 7) „Мцхетъ и его соборъ Свэти-Цховели“. (съ 27 рисунками и 55 орнаментами и плетеніями), А. Натроева. 464 стр. ц. 2 р. 50 к. Тифлисъ, 1901 г.

ՄԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

—

Նոր-Նախիջեւանի թեմական դպրոցը շուտով պիտի ընդարձակեն, նրա երկու յարկերի վրա երրորդը աւելացնելով։ Սրա կարիքը մանաւանդ մեծ եղաւ այն ժամանակից, երբ երկար տարիներից յետոյ կարելի եղաւ գիշերօթանոց բանալ (1897-ին)։

Շատ հաւանական է, որ արտաքին փոփոխութեան հետ ներքին փոփոխութիւն էլ կը մտնի այս դպրոցի, մանաւանդ գիշերօթիկ կեանքի մէջ։ Իսկ թէ փոփոխութիւնների, այն էլ արմատական փոփոխութիւնների, պէտք կայ, այդ անկասկած է։ Գոնէ այդպէս է եզրակացնում մարդ այն հանգամանքից, որ գիշերօթիկ աշակերտների եւ ուսուցիչների փոխադարձ յարաբերութիւնը, աշակերտների կեանքի ծրագիրը այնտեղ չափվում է Թէօդոսիայի վաթսունական թուականների Խալիպեան դպրոցի «Կանոնքով»։ Որքան յետադիմութիւն. 40 տարի է անցել եւ այդ երկար ու ձիգ տարիների մէջ մենք բաւականանում ենք մի հնութիւնով, որ կազմված է սխալատիկ ուսուցիչների ձեռքով։ Սրբազան այսպիսի եռանդով ենք մենք պահում հնութիւնը։

Բայց մի կողմ դնելով այդ «Կանոնքը», նոյն իսկ «գիշերօթիկ բառը» մեզանում հասկացվում է չափազանցրած։

Գիշերօթանոց անունով հասկացվում է մի ուսումնարան, որի մէջ աշակերտները ամբողջապէս գտնվում են ուսումնարանական վարչութեան հոգսերի եւ հսկողութեան տակ։

Բայց այս որոշումից չէ կարելի եզրակացնել, թէ աշակերտը ամբողջապէս կտրված պէտք է լինի արտաքին աշխարհից, չէ հասկացվում, որ աշակերտները ուսումնարանի բակից դուրս ելնելու չեն։ Այն հանգամանքը, որ գիշերօթիկ աշակերտներին թոյլ չեն տալիս արձակ շրջել ազատ ժամերին, կարելի է բացատրել միայն նրանով, որ վերակացուները, վարչութիւնը ուզում են թեթեւացնել իրանց վրա առած պարտականութիւնները։

Երբ մի ծնող իր որդուն տալիս է օտար մարդու տուն, վերջինս հօ չէ՞ պահանջում, որ աշակերտը անել մնայ ներսը, այլ թոյլ է տալիս մինչեւ որոշ ժամանակը գնայ ուր որ կամենում է։ Եւ տանտէրը, պարտաճանաչ տանտէրը իր սանի մինչեւ անգամ բացակայութեան ժամանակ կարողանում է հսկել նրա վրա։

Գիշերօթիկ ուսումնարանն էլ օտարի տուն է, ուր հաւաքված են ոչ թէ մի, երկու, այլ տասնեակներով աշակերտներ. վարչութիւնը պէտք է հսկէ նրանց վրա, ամենեւին չը զբրկելով նրանց ազատութիւնից։ Իսկ կը կարողանայ արդեօք նա հետեւել իր սաներին. անշուշտ այո, եթէ միայն նա պարտաճանաչ է։

Այստեղ նրա պարտաճանաչութիւնը պիտի երեւայ նրանում, որ ունենալու է ոչ թէ մի կամ երկու, այլ ամեն մի, ամենաշատը 10—15 աշակերտի վրա առանձին վերակացու։

Ինչն է աշակերտներին ներսը փակված պահելու նպատակը. ամն, որ նրանք կը կարողանան երկար ժամանակ անգործ անցնելով դասերը չը պատրաստած թողնել։ Բայց այդ անկարելի է. եթէ աշակերտին տված է, որ ժամը 5-ին երեկոյեան պէտք է դասի նստել, նա ոչ մի կերպ չէ կարող 6-ին գալ, ուշանալ։

Նոր-Նախիջեւանի դպրոցում օրվայ ժամերը այսպէս էին բաժանված իմ աշակերտութեան ժամանակ, չը գիտեմ այժմ ինչպէս է.

Առաւօտ. ժ. 6-ին զարթնել, լուացվել, աղօթք.
» » $6^1/_2$—8 դասերի կրկնութիւն.
» » 8—$8^1/_2$-ին թէյ.
» » $8^1/_2$—2 կէսօրի դասեր ($11^1/_2$-ին նախաճաշ).
կէսօրի ժամը 2—$3^1/_2$ արձակ.
» » $3^1/_2$—4 ճաշ.
» » 4—5 արձակ.
» 5—8 դասերի սերտողութիւն.
Երեկոյեան 8—$8^1/_2$ թէյ. $8^1/_2$-ին աղօթք եւ 9-ին քնել։

Այս տախտակից երեւում է, որ գիշերօթիկ աշակերտները դասամիջոցներից զատ ամբողջ օրվայ մէջ արձակ են միայն $2^1/_2$ ժամ (2—$3^1/_2$ եւ 4—5)։ Այդ կիրակի եւ տօն օրերը արձակ են ամբողջ օրը, բացի սերտողութիւնների համար նշանակված առաւօտեան 8—9 եւ երեկոյեան 6—8, ընդամենը 3 ժամերից։

Ի՞նչ կը հրամայէք, որ անեն աշակերտները այդ լուր օրերի իրանց $2^1/_2$ արձակ ժամերին (չը խօսենք տօն օրերի մասին). ձմեռը մնան փոշոտ սենեակներում, ուր օդը, որքան էլ մաքրվի օդափոխների միջոցով, միշտ կեղտոտ է ու կեղտոտ. ամառը ելնեն բակը, ուր ոչ մի զուարճութիւն չը կայ, բացի մարմնամարզական վարժութիւններից։

Ի՞նչ կարող են անել նրանք այդ $2^1/_2$ ժամերի ընթացքում, եթէ նրանց թոյլ տան գնալ ուր որ կամենում են. հարբեցողութիւն, թղթախաղ, սիրային արկածներ։ Ոչ այս եւ ոչ այն, եթէ դատարկված չեն այդպէս. իսկ եթէ աշակերտը արդէն փչացած է, նրան չէ կարող ուղղել նոյն իսկ բանտարկութիւնը։ Փաստ չէ՞, որ ամեն մի գիշերօթիկ ուսումնարանում համարեա բոլոր աշակերտները ծխում են, գիշերները փախչում գաղտագողի, եւ այլն։ Ուրեմն «անողը կանէ», ինչպէս ասում է առածը եւ դրա համար էլ բոլորովին անրացիոնալ է մի քանի փչացած աշակերտների համար բանտարկութեան ենթարկել բոլորին։

Բայց տեսնենք, ինչ կարող է անել աշակերտը արձակ ժամերին ընդհանրապէս. ամենաշատը զբօսնել օրիորդների հետ, քաղաքում կամ քաղաքից դուրս, գնալ հանդէսներ, հիւր։ Իսկ ինչ վատ բան կայ այդ ամենի մէջ, եւ ոչինչ... թէ որ այդպէս է, ես պնդում եմ, որ պէտք է թոյլ տալ գիշերօթիկ աշակերտներին գնալ արձակ ժամերին ուր որ կամենում են։

Եւ ինչիցն է, ինչպէս կը կարծէք, որ մեր դպրոցները եւ ճեմարանը աւարտածները, գըլխաւորապէս գիշերօթիկները, շատ անճարացած մարդիկ են լինում, անբնոյթ, եռանդազուրկ, կեանքին անտեղեակ, առաջին անաջողութիւնից յուսահատվող (բացառութիւնները շատ քիչ են). միայն ու միայն նրանից, որ շարունակ 9—10 տարի բոլորովին կտրված են եղել կեանքից։ Ուսումնարանական վարչութիւնը միշտ պէտք է աշխատէ իր սաներին տանել թատրոն, համերգ, պարահանդէս, ցուցահանդէս, դասախօսութիւնների, ամեն կերպ աշխատելով «հասարակական զարկերակը» գոնէ հնչին չափով նրանց մէջ զարգացնել։ Գովելի սովորութիւն է տարվայ մէջ 2—3 անգամ գրական երեկոյթներ սարքել ուսումնարանի մէջ. այդ երեկոյթները միշտ վերջանում են պարերով. հարց՝ որոնց համար են այդ պարերը, մեծամասնութիւն աշակերտներն, թէ փոքրամասնութիւն հրաւիրվածների համար. բայց աշակերտների մեծ մասը պարել չը գիտէ, չէ թէ պարել, այլ նոյն իսկ օրիորդին մօտենալ, օրիորդի հետ խօսել. ինչ օրիորդի, հէնց անծանօթ մարդու առաջ կանգնել, խօսել։ Այդ կերպ մեծացած աշակերտները ուսումնարանից դուրս են գալիս «бука букой»։ Նրանք պէտք է կեանքի մէջ մտնեն, գործ սկսեն. գործ սկսելու համար գիտնականութիւն չէ հարկաւոր, հարկաւոր է սրան, նրան դիմել, խնդրել, յորդորել, մեծ մասամբ անծանօթ մարդկանց հետ գործ տեսնել։

—Որբն դիմեմ, ինչ ասեմ, ծանօթ չեմ, ամաչում եմ... ահա հարցեր, որոնց առաջ բերանը բաց մնում է աստուածաբանութիւն, տրամաբանութիւն սովորած երիտասարդը։

Հաթ.

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ ՇՈՒՇՈՒ ԳԱՒԱՌՈՒՄ

(Նամակ Բալախանիից)

—

Երկար տարիներ է, որ մամուլի մէջ երեւան են գալիս զանազան յօդուածներ ու թղթակցութիւններ երկաթուղու անհրաժեշտութեան մասին Շուշի-Եւլախ կայարանների մէջ։ Ով մի անգամ ճանապարհորդել է այդ գծով, նրան երկրորդ անգամ դժուար է լինում համոզել, որ անվտանգ կարելի է անցնել այդ ճանապարհը, որտեղ աւազակութիւնները սովորական երեւոյթների չարքն են անցել։ Այժմ, երբ ձեռնարկում են Կովկասի զանազան անկիւններում երկաթուղի անցկացնելու ծրագիրներ եւ մինիստրութիւնը որոշ չափով բաւարարութիւն է տալիս այդ դիմումներին, ինչպէս Շամախու քաղաքացիներին իրաւունք է տրվում մասնաւոր հաշուով երկաթուղի անցկացնել Նաւահի կայարանից՝ ժամանակ է, որ Շուշու քաղաքային ինքնավարութիւնն էլ հետեւէ շամախեցիների օրինակին, խնդրամատոյց լինելով ուր հարկն է թոյլատրութիւն ըստանալու։ Երբ իրաւունք կը ստացվի երկաթուղին անցկացնելու, այն ժամանակ կը գտնվեն շատ հարուստներ, որոնք ուրախութեամբ կը համաձայնվեն ձեռնարկել մի գործ, որ աւելի ապահով եւ բաւարար տոկոսներ կը տայ, քան նաւթը, որի շնորհիւ Բագուն այսօր պաչարված դրութեան մէջ է։

Երկաթուղին կը տայ Շուշուն կենդանութիւն, կը վերանան այն բոլոր գժուարութիւններն ու կողոպտումները, որոնք ամեն օր կատարվում են այդ մեծ գծի վրա. գաւառացին հեշտ հաղորդակցութեան շնորհիւ իր հուսի նիւթերը կարտահանէ ուրիշ քաղաքներ. վերջապէս Շուշին եւ իր շրջակայքը, ինչպէս ամարանոցի ամենայարմար տեղեր, ուշադրութեան կարժանանան։ Սրանցով կը վերջանայ որոշ չափով անտեսական այն անել դրութիւնը, որ ներկայումս տիրում է երբեմն հարուստ Ղարաբաղում եւ դեռ աւելի սուր կերպով տպավում է գալիք օրերին։

Ի դէպ, դեռ նորերս Շուշում Հասան-Ջալալեանների ժառանգները իրաւունք տուին պ. Պոպովին վաճառելու մի տարի ժամանակամիջոցում Գանձասարի մօտ գտնվող իրանց կալուածքի այն մասը՝ ուր գտնվում են պղնձէ, արծաթէ հանքեր եւ անտառներ, մէկ ու կէս միլիոնով։ Թող Շուշու կալուածատէրերը լաւ հասկանան, որ շուտով եւրոպացին կը մտնէ իրանց երկիրը, կը շահագործէ բոլոր այն թաղնված հարստութիւնները, որոնք մեզ համար շատ չնչին արժէք ունեն. եւ միայն յետոյ կարելի կը լինի հասկանալ այն դրութիւնը, որ ստեղծված է այդպիսի վաճառուներից։ Ցանկալի է, որ գոնէ հանքերը վաճառելու փոխանակ մասով տրվեն, որ ապագայում տեղական ժողովուրդը իր հարուստ երկրի մուրացկանը չը դառնայ։

Ն. Տէր-Ղազարեան

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Սեպտեմբերի 4-ին

Այստեղի հայերը, ինչպէս երեւում է, միայն թղթախաղով չեն ուզում բաւականանալ, այժմ ձիարշաւի ետեւից են ընկել։

Ձիարշաւների միջոցին վաճառականների մի մասը՝ երեսի վրա թողած իր գործերը, շաբաթական երկու-երեք օր ստալիզատորին է նուիրում։ Ինչպէս երեւում է, ուզում են յանկարծ հարստանալ։ Այդ երեւակայական հարստութեան ետեւից ընկնելով, վերջին կօպէկներից են զրկվում եւ իրանց հարազատներին թշուառացնում։

Բաղդախնդիրներից մի քանիսը, բաղդի՝ թէ մի այլ գաղտնիքի բերմամբ, խոշոր գումարներ են տարել թղթախաղում եւ այժմ իրանց համար զբօսավայր են շինել ձիարշաւը։ Դրանց օրինակին հետեւելով, վաճառականների մի մասը եւ գործակատարների դասակարգը, իրանց ունեցած-չունեցածը ձիարշաւ են տանում, իրանց բախտին են սպասում, որ դատարկ գրպանները ոսկով լցնեն։

Մինչեւ այժմ դեռ հայ տիկիններից ձիարշաւ այցելողներ եւ տօտալիզատոր խաղացողներ չունենք, բայց եթէ տղամարդիկ իրանց համար սովորութիւն կը դարձնեն այդ խաղը, այն ժամանակ Պետերբուրգի հայ կինը յետ չի մնայ տղամարդուց, նա էլ կը սովորէ, ինչպէս սովորել է թուղթ խաղալը։

Այստեղի հայերը, մանաւանդ տիկինները եւ հոգեւորականները, շատ են հետաքրքրվում, թէ ով է «Մշակին» լուրեր հաղորդողը։ Հայանքներ են, որ թղթակցի հասցէին են ուղղում։ Մի եւ նոյն ժամանակ խոստովանում են, որ լրատուի հաղորդածները զուտ ճշմարտութիւններ են։

Պարոններ, ինչ անէ խեղճ լրատուն, երբ դուք կեանքը անմիխիթար էք դարձրել եւ միայն անմիխիթար լուրեր կարելի է հաղորդել ձեր մասին։ Մինթէ լուսանկարչի՞, կարող ենք մեղադրել, երբ տգեղի պատկերը տգեղ է դուրս եկել։ Արդեօք ախալքալաքցի թշուառներին օգնութեան ձեռք մեկնեցիք եւ լրատուն զլացաւ այդ լուրը հաղորդել, թէ այլ մի գեղեցիկ գործ կատարեցիք եւ լռութեան տուինք այդ գործը։

Ցամենայն դէպս շատ մխիթարական երեւոյթ է՝ որ մարդիկ, որոնք հայոց մամուլի մասին գաղափար չունէին, այժմ «Մշակի» մասին են խօսում։ Մամուլի ձայնը ազդել է, դա շատ լաւ նշան է։

Հոգեւորականները պատրաստած խնդիրներ ունէին եկեղեցական խորհրդի անունով օժանդակութիւն ստանալու մասին, բայց այդ խնդիրները իրանց ծոցերում էին մնացել։ Դրանց սեզօնը սեպտեմբերից է սկսվում։ Ձենք կարծում, որ երես ունենան, էլի ձանձրացնեն խորհուրդին իրանց միանման խնդիրներով։

Դիտող

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, սեպտեմբերի 14-ին

«Մշակի» № 201-ի մէջ գրած լրին պատասխանս է.—ես Վանքի գաւթից ոչ մէկին արձակած չեմ։ Ես շաբաթ օրը տեսայ մի խեղճ կնոջ Վանքի գաւթից դուրս, խղճալով նրան՝ կանչեցի ժամաւորների առաջ Վանքի ժամկոչ Սեդրակին եւ պատուիրեցի, որ նրան պատրաստարէ եկեղեցու դրան գաւթումը, մինչեւ որ երեցփոխը կարողանայ նրան մի տեղ նշանակել տալու հոգեւոր իշխանութեանը։

Այս է բոլոր եղելութիւնը։

Ղ. ա. ք. Խարազեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» հետեւեալ համարը, № 206, ս. Խաչի տօնին յաջորդող Մեռելոցի պատճառով, լոյս կը տեսնէ չորեքշաբթի օր, սեպտեմբերի 19-ին։

—

Թիֆլիսում եւ նրա շրջակայքում եկող անձրեւները դադարեցին եւ նորից եղանակը լաւացաւ։ Անձրեւները յիշեցնում էին գարնան անձրեւները իրանց յորդութեամբ, ամպերի գոռգոռոցով եւ եղանակի տաքութեամբ։ Ցուցահանդէսի այն շինութիւնները, որոնք վնասվել էին անձրեւներից, անմիջապէս վերանորոգվեցին։

—

Մեզ հաղորդում են, որ այգեգործական ժողովին մասնակցողները ուղեւորվեցին երկաթուղով դէպի Բաթում՝ այցելելու Զակվայի թէյի տնկարանները, Սակարայի ամերիկական խաղողի վազերը եւ Սկրա կալուածքի պտղաբուծական այգիները։ Գնացողները կը վերադառնան այսօր երեկոյեան՝ շարունակելու վաղվանից իրանց պարապմունքները։

—

Մեզ հաղորդում են, որ տիկ. Սիրանոյշ եւ պ. պ. Պետրոսեան եւ Աբէլեան, իրանց շուրջը խմբելով հայ դերասանական միւս կարեւոր ոյժերը, մի շարք ներկայացումներ են տալու նախ Թիֆլիսում (Արտիստական ընկերութեան թատրոնում) եւ յետոյ Բագուում։ Առաջին ներկայացումը կը լինի առաջիկայ հինգշաբթի։ Խաղալու են Զուդերմանի «Հայրենական տուն»-ը։ Ապագայ ներկայացումների համար ժամադրութիւն կայ հրաւիրել օր. Սունդուկեանցին։ Աջողութիւն ենք ցանկանում դերասանական ընկերութեան։

—

Այժմ մեր քաղաքումն է իր քրոջ հետ դոկտոր Ֆ. Ն. Ֆինկ, պրիվատ-դոցէնտ լեզուագիտութեան Մարբուրգի համալսարանի։ Դոկտոր Ֆինկը եւ իր քոյրը ուսումնասիրել են հայոց լեզուն եւ եկել են Կովկաս նիւթեր ժողովելու հայագիտութեան վերաբերմամբ։ Նրանք մտադիր են մնալ այստեղ մօտ վեց ամիս։ Դոկտորը մտադիր է վերադառնալ Գերմանիա եւ հրատարակել մի գիտական թերթ հայերէն լեզուով։

—

Մամուլի գործերի գլխաւոր վարչութեան կառավարիչ իշխան Շախովսկոյ ընտրված էր այն մասնաժողովի անդամ, որ նախապատրաստութիւններ է տեսնում մամուլի 200-ամեայ յոբելեանը հանդիսաւոր կերպով տօնելու համար։

Այժմ լրագիրները հաղորդում են, որ իշխան Շախովսկոյ ընդունել է այդ ընտրութիւնը։

—

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ Իշտում, սեպտեմբերի վերջերին, կը բացվի Թէհրանի ռուս-պարսկական բանկի բաժանմունք։ Վերջին տարիների ընթացքում, ռուս-պարսկական առեւտրի զարգացման պատճառով, այդ բաժանմունքի բացման կարիքը առանձնապէս զգալի էր։

—

Մենք արդէն հաղորդեցինք, որ Պետերբուրգի համալսարանի արեւելեան լեզուների ֆակուլտէտը մտել են այս տարի մօտ 60 ուսանողներ,—մի թիւ, որ երբէք չէ պատահել այդ ֆակուլտէտի տարեգրութեան մէջ։ Մոսկվայից «Новости» լրագրին հաղորդում են, որ նոյն երեւոյթը նկատվում է եւ Մոսկվայի Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուների մասնագիտական դասարաններում։ Այս ուսումնական տարվայ սկզբում ճեմարանի մասնագիտական դասարանները մտել են 40 ուսանողներ։ Լրագիրներից շատերը բացատրում են այս երեւոյթը նրանով, որ Ռուսաստանում այս վերջին տարին չափազանց զարգացել է հետաքրքրութիւնը դէպի Արեւելքը։

—

Մտադրութիւն կայ կառավարութեան խիստ կենտրոնին ենթարկել այն հասարակական եւ մասնաւոր հիմնարկութիւնները, որոնք յանձն են առել խնամել անտէր եւ անխնամ երեխաներին։ Սրա հետ միասին կառավարչական շրջաններում հերթական հարց է դարձրած անհարազատ զաւակներին եւ որբ երեխաներին կանոնաւորապէս խնամելու գործը։

—

Անցեալ 1900 թւականի աշնանը Մոսկվայի մանուֆակտուրային գործարանատէրերից մի քանի հոգի, կամենալով առեւտրական յարաբերութիւններ սկսել Պարսկաստանի հետ, միաբան խորհրդակցութիւնից յետոյ, մի խումբ գործակատարներ ուղարկեցին Պարսկաստան, որպէս զի նրանք, մօտիկից ծանօթանալով այդ երկրի մանուֆակտուրական պահանջների հետ, պահեստի մի կենտրոնական տեղ ընտրեն եւ ապա աշխատեն տարածել ռուսական ապրանքները Պարսկաստանում։ Գործակատարների խումբը տեղի ընտրութեան մէջ կանգ առաւ Թէհրանի վրա։ Բայց հէնց առաջին օրերում ռուս առեւտրական գործակալները հանդիպեցին լուրջ արգելքների, հաղորդակցութեան ճանապարհների չափազանց անբաւարար լինելու պատճառով, այնպէս որ անցեալ տարվայ նոյեմբերին Մոսկվայից պահանջված ապրանքները ստացվեցին Թէհրանում այս տարվայ փետրվար ամսին։ Այսուամենայնիւ Մոսկվայի ֆիրմաների ներկայացուցիչները շատ աջող կերպով ծախեցին ստացված ապրանքը եւ գոհ մնացին Պարսկաստանի հետ առեւտրական յարաբերութիւններ կապելու այս առաջին փորձից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Ամսատի Զաման» լրագրին գրում են Կ. Պոլսից, թէ վերջին ժամանակ լրագիրներում սկսեցին երեւալ խղճակցութիւններ Փոքր-Ասիայի զանազան հայաբնակ քաղաքներից, որոնց մէջ հայերը շնորհակալութիւն են յայտնում կառավարութեանը նրա համար, որ իբր տեղական վալիներն եւ մութէսէրիֆները առանձին խնամք եւ ուշադրութիւն են ցոյց տալիս հայերին եւ յարգանքով են վերաբերվում դէպի նրանց ազգութիւնն ու կրօնը։ Այդ խղճակցութիւններից մէկի մէջ ասված է, ի միջի այլոց, թէ Ամասիայի ս. Աստուածածին եկեղեցու տօնի ժամանակ, երբ զանազան կողմերից այդ քաղաքն էին հաւաքվել 4000-ից աւելի ուխտաւոր հայեր, բոլորն էլ խորին շնորհակալութիւն էին յայտնում Թիւրք իշխանութիւններին՝ նրանց հոգացողութեան համար ուխտաւորների ապահովութեան մասին։ Լրագրի ասելով, այս խղճակցութիւնների երեւալը անմիջական ազդեցոյց է այն բանի, որ հայերին Փոքր-Ասիայի խորքերում ենթարկում են տանջանքների եւ այսպիսի խղճակցութիւններով փորձում են խեղդել տանջուողների յուսահատական աղաղակները։

—Կ. Պոլսի հայ լրագիրները քննադատում են ռուսահայերի վարմունքը, որոնք իրանց եկեղեցիներում ամեն տեղ հոգեհանգիստներ են կատարում հանգուցեալ Գ. Զանչեանի համար եւ մի եւ նոյն ժամանակ ամենեւին հոգս չեն քաշում պահպանելու այն որբանոցները, որ հիմնել է Թիւրքիայում հանգուցեալ հրապարակախօսը։ Այդ որբանոցները հիմա, դրամական միջոցների պակասութեան պատճառով, մէկը միւսից յետոյ փակվում են եւ որբերին տանում են իրանց ապաստարանները կաթոլիկ եւ բողոքական միսիոնարները։

—Բելգրադից հաղորդում են արտասահմանեան լրագիրներին, որ այնտեղ վերջին օրերս յամառ լուրեր են պտտում, թէ Ալէքսանդր թագաւորը կամենում է սերբիական գահի ժառանգ նշանակել իր կրտսեր աներոջդի Նիկոլա Լունեվիչին, Դրագա թագուհու եղբօրը։ Սերբիական մինիստրութիւնը ամեն ջանք գործ է դնում հաւոզելու թագաւորին, որ յետ կենայ իր այդ մտադրութիւնից։ Լուրերին նայելով, Վուիչ մինչեւ անգամ հրաժարականի խնդիր է ներկայացրել Ալէքսանդր թագաւորին։

—Հեռագիրներից արդէն յայտնի պարտութիւնը, որ կրեցին անգլիական զօրքերը Նատալի սահմանի վրա գեներալ Բոտայի զօրքերի հետ ունեցած կռուում, սաստիկ ապշեցրեց անգլիացիներին։ Նոյն իսկ ունիոնիստական օրգանները չեն թագցնում հասարակութիւնից, որ իրերի դրութիւնը հարաւային Աֆրիկայում չափազանց լուրջ է եւ դատապարտում են կառավարութեան անհոգութիւնն ու ապերագրագիտութիւնը։ «Times» ասում է. «Զը կամենալով չափազանցացնել Նատալից ստացված տեղեկութիւնների նշանակութիւնը, մենք այսուամենայնիւ յոյս ունենք, որ նրանք կը սաիպեն կառավարութեանը վերջապէս հասկանալու, որ հարաւ-աֆրիկական պատերազմը չէ վերջացած, թէպէտ եւ կառավարութիւնը մի տարի առաջ յայտարարել էր նրան վերջացած։ Երկիրը պատերազմի սկզբից էլ աւելի պարզ եւ աւելի ճիշդ գաղափար ունէր, թէ ինչ է պահանջվում անել Աֆրիկայում, քան կառավարութեան ներկայացուցիչները։ Մինիստրութիւնը աշխատում էր կրճատել ծախքերը, բայց հասարակութիւնը իր առողջ դատողութեամբ հասկացաւ ճշմարտութիւնը,— որ այնքան ամրմռոնելի է մեր կառավարիչների համար,—թէ «էժան գնով» պատերազմ վարելու փորձը ամենավնասակար եւ ամենաանմիտ յիմարութիւնն է բոլոր յիմարութիւններից։ Այդ յիմարութիւնը կատարվեց հարաւային Աֆրիկայում եւ, ըստ երեւոյթին, կատարվում է եւ հիմա։ Ամենքը, բացի կառավարութիւնից, դեռ մի տարի առաջ պարզ տեսնում էին, որ անհրաժեշտ է թարմ ոյժեր ուղարկել Աֆրիկա, բայց կառավարութիւնը չարաչ այդ եւ բաց թողեց թանգագին ժամանակը»։ «Times» պահանջում է, որ նոր զօրքեր ուղարկվեն պատերազմի դաշտը։

—Տարաձայնութիւնները Սպանիայի եւ Մարոկկոյի մէջ սկսում են սպառնական կերպարանք ստանալ։ Բանը ծագել է նրանից, որ աւազակները քիչ ժամանակ առաջ յափշտակեցին սպանիացի Մօնտէս անունով մի առեւտրականի որդուն եւ աղջկան։ Յափշտակողները Մօնտէսի որդուն բռնի մահմեդականացրին, իսկ աղջկան հարէմ մտցրին։ Իշխանութիւնների բոլոր փորձերը՝ յետ դարձնելու յափշտակվածներին՝ ապարդիւն անցան, որովհետեւ աւազակները պատկանում են Բէնի-Սարա ցեղին, իսկ այդ ցեղը չէ ճանաչում Մարոկկոյի սուլթանի իշխանութիւնը եւ չատ անգամ սուլթանը ստիպված է լինում զինուորական ոյժ գործ դնել նրան հնազանդեցնելու համար։ Որովհետեւ յափշտակողների ցեղը ապրում է ոչ ծովափում, այլ երկրի ներսում, ուստի ծովային ցոյցը Սպանիայի կողմից ոչ մի նշանակութիւն չէ կարող ունենալ։ Աւելի յարմարաւոր է համարվում գրաւել որ եւ է կէտ ժամանակաւորապէս։ Բայց մի այսպիսի քայլ կարող է զարթեցնել պետութիւնների կասկածը, թէ Սպանիան ունի եւ ուրիշ դիտաւորութիւններ, բացի յափշտակվածներին յետ ստանալուց։ Սպանիային մնում է միայն դիմել սուլթանին եւ առաջարկել, որ ինքը սուլթանը պատժէ յանցաւորներին։ Ինչ էլ որ լինի, իսկութիւնն այն է, որ տարաձայնութիւնը ոպառնական չափեր է ընդունել։ Տանժէրի սպանիական դեսպանը պահանջել է պատերազմական նաւ ուղարկել եւ պատրաստվում է ուլտիմատում ներկայացնել Մարոկկէյում։

—Բէլգրադից հաղորդում են, որ Կ. Պոլսի սերբիական դեսպան Գրուիչի եւ ռուսաց դեսպան Զինովիէվի բոլոր ջանքերը՝ մի փոքր բարւոքել սերբերի թշուառ դրութիւնը Հին-Սերբիայում՝ ապարդիւն անցան։ Առաջվան պէս շարունակվում են ալբանացիների յարձակումները քրիստոնեաների վրա Կոսսովոյում։ Սերբիական դեսպանը կատաղում է, տեսնելով Իլդիզ-Քեօսկի անտարբեր վերաբերմունքը այդ հարցին։ Նա մտադրութիւն ունի գնալ Բէլգրադ եւ առաջարկել թագաւորին ու խորհրդի նախագահ Փուիչին դիմել մի վերջնագրով Բ. Դրան եւ մի եւ նոյն ժամանակ խնդրել եւրոպական պետութիւններին իրանց ազդեցութիւնը գործ դնել, որպէս զի Բ. Դուռը, վերջապէս, մտցնէ բէֆորմներ Հին-Սերբիայում եւ Մակեդոնիայում։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մ Ա Ն Ր Ա Ն Կ Ա Ր

—

Անցեալ կիրակի չը հրատարակվեց «Մշակը» եւ լոյս չը տեսաւ իմ «Մանրանկարը»։

Իմ ընթերցողների մի մասը սպասում էր, որ ես այդ օրը պէտք է խօսէի այդ օրվայ ճաշկերոյթի առիթով, այն ճաշկերոյթի, որ այդ օրը պէտք է տրվէր մի խումբ յարգողների կողմից Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանին՝ Թիֆլիսի թեմից նրա հեռանալու պատճառով։

Ես պէտք է հիասթափեցնեմ իմ այդ ընթերցողներին։ Ճաշկերոյթի մասին ես ոչինչ չը պէտք է խօսէի։

Այդպէս էլ յայտնեցի կլուբի իմ ծանօթներին, երբ խօսք բացվեց այդ բանի մասին։

—Իզուր, իզուր, յայտնեց այդ ծանօթներից մէկը, որը նախօրօք հաղորդել էր ինձ մի քանի չատ ընտրոյ տեղեկութիւններ ճաշկերոյթի նախապատրաստութիւնների մասին։

—Այժմ լաւ կուլէր, որ մէջ ճանչնայինք, թէ ովքեր էին մօտ էլի էդ ճաշին, նկատեց Բուղդան Բուղդանիչը։

—Հա, ճիշդ է, մէջ մտաւ մեր ծանօթ ճոռոմարան փաստաբանը, պէտք է նկարագրէիք անտուրաժը, հետաքրքրական է եւ բնորոշ է անտուրաժը։

—Անտուրաժս վուրն է, էդ էլ ինչ նուր իքմին է, խմոռեց դէմքը Բուղդան Բուղդանիչը։

Փաստաբանը բացատրեց, որ նա հարցնում է արքազանի շրջապատողների մասին։ Այդ է նրան հետաքրքրող անտուրաժը։

—Աբա իմ ասածն ինչ էր. էդ էր էլի, չուարած նկատեց Բուղդան Բուղդանիչը։

—Դա դժուար բան չէ, մէջ մտաւ մի չորրորդ անձն։ Ես լսեցի, որ ճաշկերոյթի տաք ժամանակը ուղարկել են լուսանկարչի ետեւից եւ նա անմահացրել է բոլորին։

—Ի փառս ապագայի, բացականչեց փաստաբանը։

—Զէ, ես ուրիշ փիքր ունիմ, գլուխը թափ տալով նկատեց Բուղդան Բուղդանիչը։ Ես էդ պատկերը կու առնիմ ու մէ լաւ կը անդրիմ։ Ախպէր, էդ մարթիքը հաւատարիմ օմքներիր ին էրեւում։ Նրանք մէբաշ էրեանիրը չուռ չը տուին ու մէբաշ չը փախան ուրիշների նման։ Դրանք ուժուդնիր ունին, ուժուդով մարդիկ ին։

—Պատուի բան է, խօսեց մի ուրիշը։ Հէր օրհնածներ, մարդը իշխանաւոր է, մի քանի տարի գործել է, այժմ էլ թողնում գնում է։ Մէկ հրաժեշտի ճաշ էլ չը տան։ Դրա մասին կարելի է միթէ խօսել։

—

Ճաշկերոյթի մասին չեմ խօսի։ Բայց մի քանի խօսք ճաշկերոյթի հերոսի մասին աւելորդ չէ։

Սուրէնեանցը դեռ ծեր չէ եւ իր գործունէութիւնը չէ փակում առ միշտ։ Նրա հետ դեռ պէտք է, երեւի, ապագայում շփումներ ունենանք հասարակական ասպարէզում։

Ուրեմն փորձենք։

Սուրէնեանցը առաջին անգամից կուլտուրական անձի տպաւորութիւն է թողնում։

Դա անկասկած է։

Ինչպէս որ կան ոսկեջրած, արծաթեջրած, նիկելաջրած իրեր, այնպէս էլ կարող են լինել կուլտուրաջրած, կուլտուրաթաթախ անձնաւորութիւններ։

Սուրէնեանցը անցել է գիմնազիական դասընթացք եւ եթէ դէպք պատահի՝ կարող է խօսել մեր հրապարակական հարցերի մասին։

Դպրոցական, բարեգործական, արդիւնագործական խնդիրները խորթ չեն նրա համար։

Նա սիրում է մտցնել պաշտօնավարութեան մէջ որոշ ձեւեր, որոնք ընդունված են դիւանատներում։

—Գրութիւն եմ ստանում, ասում է սրբազանը իր ծանօթներին, իսկոյն նշանակում եմ օրը, թիւը։ Մինչեւ չեմ պատասխանում՝ չեմ հանգստանում։ Իմ թղթերը ժամանակին գրվում են եւ տեղ հասցնվում։ Իմ գործավարութիւնը իր ճշդութեան կողմից ապտէկ է, ապտէկ։

Մի անգամ նրան ասացին, որ վատ չի լինի Թիֆլիսում, եկեղեցիներին կից, թաղական խորհուրդներ հիմնել, որոնք խնամէին թաղի կարօտեալներին։

Լաւ միտք էր։

Սուրէնեանցը հրաւիրեց առաջնորդարան իր ճանաչած ձեռնհաս անձանց եւ մի քանի ժողովներ կազմելով՝ մշակեց ծրագիր։

Մի ուրիշ անգամ նրան առաջարկվեց Մարցի կալուածքների բարւոքման մասին ծրագիր մշակել։

Լաւ առաջարկ էր։

Սուրէնեանցը հրաւիրեց մասնագէտների, որոնք ուսումնասիրեցին գործը եւ կազմեցին բարւոքումների նախագիծ։

Մի երրորդ անգամ, ընտրութիւնների առիթով, նա ձեռնարկեց ընտրողական կանոնադրութիւն կազմելու։

—Լաւ, հէնց դրա համար միթէ չարժէր մի ճաշկերոյթ տալ։

—Ի հարկէ, արժէր, ինչ խօսք։

—Աբա էլ ինչ են այնքան խօսում։

—Եւ սակայն...

—Էլ ինչ սակայն։

Սակայն ոչ մի բարւոքում տեղի չունեցաւ կեանքի մէջ։ Ծրագիրները միայն մնացին ծրագիր։ Գործավարութիւնը դրական հետեւանքներ չունեցաւ։

Եւ դրութիւնը դարձաւ յուսահատական։

Անբաւականութիւն ամեն տեղ, թէ բարեկամների եւ թէ հակառակորդների շրջանում։

Ահա համադումարի մի քանի կէտերը։

Շարունակվեցին անարժանների քահանայական ձեռնադրութիւնները։

Սանձարձակ դարձան այն երէցփոխները, որոնք խաղեր էին խաղում հաշուեւութեան հետ։

Զը քննվեցին բազմաթիւ բողոքներ զեղծումների մասին։

Կազմվեց սիրելիների խումբ եւ չաղախվեց ֆավորիտիզմի խմոր։

Քահանաները, ժողովրդի կամքի հակառակ, պարտաւորեցուցիչ կերպով մտցրվեցին թեմական դպրոցի հոգաբարձութեան մէջ։

Կրճատվեցին թեմական դպրոցի հոգաբարձութեան, տեսչի եւ մանկավարժական ժողովի իրաւունքները յօգուտ առաջնորդի։

Այս եւ այն անձի պաշտպանութիւնը, մի որ եւ է ուսուցչի պաշտօնի մէջ պահելը կամ քահանային այս եւ այն եկեղեցում պաշտօն տալը դարձան գործավարութեան ղեկավար սկզբունքներ։

Կօնդակների միջոցով ճնշում գործելը դարձաւ մի սիստեմ, որը վերջապէս եւ կործանվեց կօնդակի չնորհիւ։

Բոլոր գործերը պատում էին մասնաւոր ազդեցութիւնների եւ անձնական նկատումների շուրջը։

Դաւանանք, հաժոզմունք, հիմական սկզբունք եւ որոշ տեսակէտ ասած բաները մնացին օտար, խորթ եւ անպատուաստելի։

—Կարելի է, ինքը ուզել է լաւ բաներ անել, բայց նրան խանգարել են։

—Ապացուցէք։

Ինչպէս ոսկեջրած եւ արծաթեջրած իրը, երբ ազատվում է իր ազնիւ թաղանթից, մնում է իր նախկին էութեան մէջ, այնպէս էլ կուլտուրաջրած անձնաւորութիւնը հանդիպացաւ մեր առաջ իր բնական իսկութեան մէջ։

Սուրէնեանցը չափազանց զգոյշ, չափազանց երկչոտ, չափազանց անձնասէր լինելով՝ ընկաւ կեղծ խորհրդատուների եւ փտանգաւոր բարեկամների գիրկը, որոնք եւ կործանեցին նրան։

—Իսկ նա, ով պէտք է նրան փոխարինէ, ում որ նշանակում են նրա տեղ, միթէ աւելի լաւ է, հարցնում է ընթերցողը։

—Հէնց դարդն էլ այդ է։

Վրթին

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

15 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Սեպտեմբերի 14-ին Պետերբուրգ վերադարձաւ Մեծ-Իշխան Կիրիլ Վլադիմիրովիչ։

Ներքին գործերի մինիստրութիւնը, արդարադատութեան եւ ֆինանսների մինիստրութիւնների համաձայնութեամբ, Վիտեբսկի, Մինսկի եւ Մոգիլեւի նահանգներում 1889 թւի յուլիսի 12-ի օրէնքները մտցնելու ժամանակամիջոցը, որոնք վերաբերում են գիւղացիական եւ դատաստանական հիմնարկութիւնների բարեփոխմանը, նշանակէ 1901 թւի հոկտեմբերի 1-ին։

Հակամանտախտային մասնաժողովից. «Ենէապոլ քաղաքը սեպտեմբերի 13-ից յայտարարված է ժանտախտի կողմից անբարեյաջող։

ԼՕԶ։ Սեպտեմբերի 14-ին այստեղ հասաւ զինուորական մինիստրը։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչէնէրի հրաժարականի մասին տարածված լուրը անհիմն է։

ՎԻԵՆՆԱ։ Հօֆբուրգում տեղի ունեցաւ հանդիսաւոր ճաշկերոյթ, ի պատիւ գերմանական բատալիոնի օֆիցէրների, որոնք եկել են այդտեղ Տրիէստի վրայով Չինաստանից վերադառնալիս։ Ֆրանց-Յովսէփի կայսրը զօրահանդէս կանէ այդ բատալիոնին։

ՎԻԵՆՆԱ։ Ի պատիւ գերմանական օֆիցէրների տուած ճաշկերոյթի ժամանակ Ֆրանց-Յովսէփ կայսրը բաժակաճառ արտասանեց, ասելով, թէ իր հաւատարիմ բարեկամ Վիլհելմ կայսրին հաճոյ էր հրամայել, որ գերմանական բատալիոնը հայրենիք վերադառնայ Վիեննայի վրայով։ Կայսրը սրտագին կերպով ողջունեց քաջ բատալիոնը, աւելացնելով, թէ համակված լինելով զինակցական հաւատարիմ բարեկամութեան զգացմունքով, հաղորդում է բատալիոնին իր ամբողջ զօրքի կողմից ընկերական ողջոյն։ Ճառի վերջում կայսրը ցանկութիւն յայտնեց, որ օֆիցէրները հաճութեամբ յիշեն արեւելեան Ասիայում աւստրօ-ունգարական ընկերների հետ միասին անցկացրած օրերը։

ՄՕՍԿՎԱ։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը դիմեց միջնակարգ ուսումնարանների վերատեսուչներին՝ առաջարկելով նպաստել ուսումնարաններում աշակերտական ինայողական դրամարկղներ հիմնելուն։

ԼՕՆԴՕՆ։ «Daily News» հաղորդում է երէկ երեկոյեան զինուորական շրջաններում պտտող լուրը, թէ Կիտչներ հրաժարական է տուել հարաւային Աֆրիկայի անգլիական զօրքերի գլխաւոր հրամանատարի պաշտօնից՝ Բրոդրիկի հետ տարաձայնութիւններ ունենալու պատճառով։ Կառավարութիւնը իբր թէ պնդում է, որ Կիտչներ յետ առնի իր վճիռը, բայց Կիտչներ խոյս է տալիս. այս պատճառով կառավարութիւնը դիմել է մի բարձրաստիճան ան-

ձի, որպէս զի նա միջնորդ հանդիսանայ կառավարութեան եւ կիսչենների մէջ։

ԲԵՐԼԻՆ։ «Francfurter Zeitung» լրագրին հաղորդում են Նիւ-Եորկից, թէ Ռուզվէլտ մօտ օրերումս գրել է Բոստոն պրոֆէսոր Միւնստէրբերգին հետեւեալը. «Շատ քիչ բան այնքան մօտ է իմ սրտին, որքան այն հոգսը, որ Գերմանիայի եւ Ամերիկայի մէջ միշտ գոյութիւն ունենայ ամենասրտագին բարեկամութիւն»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՄԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա. Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վէներական (սիֆիլիս) և միզաքեռ. հիւանդ.
Ն. Մ. Զիկօվանցի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Ն. Ի. Գզելիով—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Ռաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Նարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոսամբէկով—6—7 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ք. Ի. Գզելիով—7—8 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ս. Առվանիսեանի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Լոյս տեսաւ
ԲԺՇԿԱԳԵՏ ԱՐԾՐՈՒՆՈՒ
„ՄԻ ԽՄԻՐ“
2-դ տպագրութեամբ։ (3 պատկ.)
ԳԻՆՆ Է 5 Կ.
Դիմել՝ Книжный магазинъ Гуттенбергъ, կենտրոնական գրավաճառանոց եւ հեղինակի մօտ. Д-ру В. Арцруни. 8—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Օր. Սաթենիկ
ԾԵՐՄԱԶԱՆԵԱՆՑ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ
Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյեան ժամը 5—7
Վանքի մեծ փողոց, տուն Մարտիրոսեանցի։
(Հ. Կ.) 6—60

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ
ժաղերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց
ՁՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն եւ ապիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մոռները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ ապիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, ընակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագումի. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։ 73—100

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎՈՐԱՆԻ
աւագների խորհուրդը իսնարհաբար խնդրում է պ.պ. անդամներին չնորհ բերել
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
սեպտեմբերի 30-ին, երեկոյեան ժամի 10-ին։ Ժողովում պէտք է քննվեն ժողովարանի ամառային բնակարանի վերանորոգութեան համար արած աւելորդ ծախքի, լուսաւորութեան եւ պարտքերի հարցերը։
(14, 23, 30) 1—3

Թաւրիզի Միացեալ Հայուհեաց Բարեգործական ընկերութեան կար ու ձեւի արհեստանոցների համար
ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ
Պայմանների համար դիմել Օլգինսկայա փ., № 19, տ. Ժօրժին։ 1—3

Ատամի եւ բերանի խոռոչի հիւանդութիւնների
ԲԺԻՇԿ Ն. ԿԱՃԿԱՃԵԱՆ
վերադարձաւ եւ ընդունում է հիւանդների։ Երեւանեան հրապարակ, տուն Խարազեանի, «Ройновъ»-ի լուսանկարչական գործարանի տակը։
Эриванская площадь, домъ Харазова.
(Ե. Հ. Չ. Կ.) 1—10

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ
ՀԱՐԿԱՒՈՐ Է
ՄԻ ՎԵՐԱԿԱՑՈՒ
որը պէտք է աւարտած լինի պետական միջնակարգ ուսումնարաններից կամ ազգայի թեմական դպրոցներից մէկում։ Դպրոցի կանոնադրութեան համաձայն, վերակացուն հաստատվում է միմեայ պաշտօնավարութիւնից յետոյ։ Դպրոցը գիշերօթիկ է։
Տեսուչ՝ պետական խորհրդական
Գ. Զարիխեան
(Չ. Կ.) 2—2

Մ. Տ. ՎԱՍԻԼԻԵՎԻ
ԶՈՒԹԱԿԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԿՈՒՐՍԵՐ
Գարապժունքները սկսվում են սեպտեմբերի 1-ից։ Վարձը ամբողջ ուսումնական տարվայ համար—80 ռուբլի. վճարը կիսամեակներով։ Ընդունելութիւնը ամենայն օր, ժամի 10-ից մինչեւ 5-ը եւ 5-ից մինչեւ 7-ը։ Грибоѣдовская, № 5։ 11—11

ԱՄԵՆԱՑԱՑՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ

ՐՕՑԵԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ԳԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԳԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՑՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՑՆԱԽԱՋԵՐ, ԼԱՐԵՐ, ԵՒ ԱՑԼՆ, ԵՒ ԱՑԼՆ։

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։
ՊՐԷՑՍԿՈՒՐԱՆՏՆ
ուղարկվում է ձրի։
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՋԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԴԷՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան
Музыкалное депо Б. М. Мириманіана, ТИФЛИСЪ.
Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.
(Կիր.)

Պատիւ ունեմ յայտնելու յարգելի Հասարակութեան եւ վաճառականներին,
որ այս տարի ստացել ենք մեծ քանակութեամբ
ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՐԷԶԻՆԷ ԿԱԼՕՇՆԵՐ
ամեն տեսակ, տղամարդկանց, կանանց եւ երեխաների։ Ուստի խնդրում եմ յարգելի առնողներին դիմել մեզ, ուր կը ստանան նոր ապրանք։ Մեծ քանակութեամբ գնողներին կը լինի բաւական զիջում։ Նոյնպէս ստացել ենք ՊՐՕՎՈԴՆԻԿ կոչված ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակի։ Գատուէրները կը կատարվեն անմիջապէս, նայած պայմաններին։ Մեզ մօտ ծախվում են նոյնպէս կոշիկները փափկացնող իւղեր եւ փայլ տուող գունաւոր գլանգուրն'եր։ Նոյնպէս ծախվում են արտասահմանի եւ Ռուսաստանի ամեն տեսակ կաշուեղէն ապրանքներ եւ կօշկակարական ամեն տեսակ գործիքներ։
Մեր հասցէն՝ Тифлисъ, Армянскій базаръ, Братья Яргуловы.
Բաժանմունքը՝ Баку, Губернская ул., Т. Яргулянцъ.
(Չ. Կ.) 11—20

Սարգիս Վ. Աբրահամեան
Адр. Сололаки, уголъ Гановской и Садовой, д. Маркарова, № 27 и 31.
Սովորեցնում եւ պատրաստում է երկու սեռի անձանց չորս ամսվայ ընթացքում, երաշխաւորութեամբ եւ հարկաւոր դէպքում—յանձնարարականներ տալով պարապմունքներ գտնելու համար
ՀԱՇՈՒԱԳԱՀՈՒԹԻՒՆ
1) Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով. գիւղատնտեսական, նաւթարդիւնաբերական, գործարանական, առեւտրական, բանկային եւ չոգենաւային հաշուապահութիւն։
2) Առեւտրական թուաբանութիւն.
3) Առեւտրական թղթակցութիւն։
4) Գարտաժուրհակի օրէնքները։
5) Գեղագրութիւն, ուսումնասիրութիւն զանազանատեսակ շրիֆտների եւ ուղղումն ամենավատ ձեռքերի։
Հասցէն՝ ՍՕԼՕՂԱԿ, Գանօվսկայա եւ Սադովայա փողոցների անկիւն, տուն Մարգարեանի №№ 27 եւ 31։
Կարելի է տեսնել առաւօտեան ժամի 9-ից մինչեւ 11-ը եւ 4-ից մինչեւ 7-ը երեկոյեան։ 18—25

„ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ“ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ
վաճառվում են
Շիրվանզադէ.—Նաժուա, գինն է 1 ռուբլի, Քաոս—1 ր. 50 կ., Արաէն Դիմաքսեան—1 ր. 50 կ., Կրակ—30 կ., Մելանիա—50 կ., Վէպիկներ—40 կոպէկ։ Ցանկացողները կարող են ստանալ եւ փառակազմ։
Նազարեան Է. Ք. Հ.—Ընտիր հատուածներ 1 ր.—Անեկդոտներ 50 կ., Յիս. Քրիստ. մկրտութիւն եւ չարչարանքը 23 կոպէկ։
Արիստ. արք. Սեդրակեան.—Քահանայական խնդիր—1 ր., Աժուսական խնդիրներ—1 ր., Յովհան. եպիս. Շահխաթունեանի կենսագրութիւնը 1 ռուբլի. Զօն Վիլիամ Դրեպէր 2 ռուբլի։
Մերենց.—Երկունք—1 ր., Թորոս Լեւոնի—1 ր., Թէոդորոս Ռշտունի—1 ռուբլի։ Ընտիր Հայկազունք պատկերազարդ 2 ր. 50 կոպէկ։ Զէյթունի անցեալէն եւ ներկայէն՝ քարտէզով 1 ր. 50 կոպէկ։
Աղայեան Ղազարոս.—Արութիւն եւ Մանուէլ 60 կ., բանաստեղծութիւններ 1 ր. 50 կ. Իմ կեանքի գլխաւոր դէպքերը 1 ր. 20 կ., Ժամանակակից մատենախօսութիւն 20 կ.։
Հայկական ժողովածուներ, ոսկերէն եւ հայերէն, եկուսը միասին 1 ռուբլի։
Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ“ (Лорисъ-Меликовская улица, № 11), Г. Галустяну. 2—2

ԾԱԽՎՈՒՄ Է ԵՆ 10 ՌՈՒԲԼՈՎ „ՇՂԹԱՑ“
Նաւթարդիւնաբերական ընկերութեան փայեր։ Հասցէն՝ Հալաբար, Պետրոպավլովսկի փող., Պրովիանտսկի մագազինի հանդէպ, տուն Բայասողլովի, № 18. Սահակ Յակոբեանին։

ՊԼՏՔ Է ՄԻ ԴԱՅԵԱԿ
հայ կին, Բագուի համար։ Հարցնել Սօլոլակում, Բեհբութեան (նախկին Սադովայա) փողոցում, տ. № 54 դնդապետ Սահակեանի բնակարանում։
(Չ. Կ.) 2—2

ՆՈՐ ԲԱՑՎԱԾ Է
ԱՐՀԵՍՏԱՆՈՑ
եւ
ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ԴՊՐՈՑ
Ընդունվում են պատուէրներ կանանց եւ երեխաների հագուստների։ Օլգինսկայա փողոց, № 19։ 2—3

ՆՈՐՈԳՈՒՄ ԵՄ
ԱՄԵՆԱԷԺԱՆ ԳՆՈՎ
ցեցը կերած, այրված եւ փտած գորգեր, կապերտներ, ձնձեր...
Ад. Тифлисъ, 7-й уч., Ахметская ул., д. № 43, Пепела Паремузова. 2—3

Կօնֆէտի եւ Շօկօլադի գործարան
„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Առաջարկում է թարմ կարամել մրգեղէնից, մենպանսէ, մարմէլադ, պաստիլա, զէֆիր եւ այլն։
Պատուէրներով դիմել գործարան. Պավլովսկայա փողոց, սեփական տուն, տէլէֆոն № 362.
Սեփական գործարանական խանութը գտնվում է Մէյդանում, եղբ. Հէջուբեանների տանը, տէլէֆոն № 772.
Մեր ապրանքները ծախվում են բոլոր կոլոնիական խանութներում։
Բագուի եւ Բագուի գաւառի համար ներկայացուցիչ է Նիկ. Սամարչեանց, Միքայէլեան փող., տ. Աշումեանի։ 54—100

Дозволено цензурою, Тифлисъ, 15 Сентября 1901 г.
Электропечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.